

## ԱՂՎԵՐԱՆՅԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ. «ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ»\*

**ԸԸ ԳԱՄ Արևելագիտության ինստիտուտի և Ռուսաստանի Ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (այսուհետ՝ ՌՌՀԻ) միջև ստորագրված գիտական համագործակցության մասին համաձայնագրի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ 2012 թ. հոկտեմբերի 10-ին Արևելագիտության ինստիտուտը և ՌՌՀԻ-ն Աղվերանում կազմակերպեցին «Իրավիճակը և զարգացման միտումները Մերձավոր Արևելքում» խորագիրը կրող գիտական սեմինար:**

Սեմինարի շրջանակներում անցկացվեց երկու նիստ, որին մասնակցեցին 12 գիտաշխատողներ ԸԸ ԳԱՄ Արևելագիտության և Ռուսաստանի Ռազմավարական հետազոտությունների ինստիտուտներից: Մասնակիցներն անդրադարձան տարածաշրջանին հուզող արդիական հիմնախնդիրներին, Մերձավոր ու Միջին Արևելքում, ինչպես նաև Կովկասում տեղի ունեցող ներկա քաղաքական զարգացումներին:

Սեմինարի աշխատանքների մեկնարկը տվեց Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ԸԸ ԳԱՄ թղթակից անդամ **Ռ. Սաֆրաստյանը**: Նա բարձր գնահատեց երկու երկրների գիտնականների հանդիպումը և հույս հայտնեց, որ մասնակիցները ոչ միայն կվերլուծեն Մերձավոր Արևելքում տիրող իրավիճակը, այլև կընդհանրացնեն քննարկումների արդյունքները, դրանք արտացոլելով հետագա փորձագիտական աշխատանքներում: Ավելին՝ Ռ. Սաֆրաստյանը տեղեկացրեց նաև, որ սեմինարի արդյունքները կներկայացվեն երկու երկրների նախագահներին:

Ռուսական կողմից բացման խոսքով հանդես եկավ Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի տնօրենի առաջին տեղակալ, պատմ. գիտ. դոկտոր **Կ. Կոկարևը**: Նա կարևորեց ընտրված թեմայի արդիականությունը և իր ելույթի շրջանակում մանրամասն անդրադարձավ համաշխարհային գործընթացներին, ինչպես նաև նախանշեց Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքները:

Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Ռազմավարական հետազոտությունների ազգային ինստիտուտի տնօրեն, քաղաքակ. գիտ. դոկտոր **Ն. Քոթանջյանը**: Նա շեշտեց Հայաստանի և Ռուսաստանի առաջատար գիտական և վերլուծական կենտրոնների համագործակցության կարևորությունը:

**Առաջին նիստի** առաջին երկու զեկուցումները նվիրված էին Թուրքի-

\*Ընդունվել է տպագրության 25.11.2012:

Գ (Ժ) քաղաք. թիվ 4 (40) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2012  
ՎԷՄ համահայկական հանդես

այի քաղաքական իրավիճակին: ՌՌՀԻ Կենտրոնական Ասիայի և Մերձավոր Արևելքի կենտրոնի ղեկավարի տեղակալ, Մերձավոր Արևելքի բաժնի տնօրեն **Ա. Գլազովայի** զեկուցման թեման էր՝ «Սիրիական ձգնաժամի ազդեցությունը Թուրքիայի ներքին քաղաքական իրավիճակի վրա»: Նա իր ելույթում շեշտեց, որ «արաբական գարնան» հետ համատեղ Թուրքիան փոխել է իր քաղաքականությունն այն երկրների հանդեպ, որտեղ հուզումներ տեղի ունեցան: Ի սկզբանե այդ ռազմավարությունն ունեցավ որոշակի հաջողություններ, սակայն Սիրիայում տևական ձգնաժամի պատճառով նման քաղաքականությունը Թուրքիայում ստեղծեց որոշակի ներքաղաքական խնդիրներ:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի գիտաշխատող **Տ. Մանուկյանը** ««Քրդական գործոնը» թուրք-սիրիական հարաբերություններում և ՔԲԿ-ի վերաձևավորումը» թեմայով զեկուցման մեջ հանգամանորեն վերլուծեց քրդական գործոնի դերը թուրք - սիրիական հարաբերություններում:

ՌՌՀԻ կովկասյան հետազոտությունների բաժնի ղեկավար **Յ. Ամելինայի** թեման էր՝ «Իսլամական սպառնալիքի մեծացումը Ռուսաստանում, հատկապես Հյուսիսային Կովկասում և Պովոլժիեում՝ արաբական աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների հետ կապված»: Խոսելով Հյուսիսային Կովկասում և Պովոլժիեում արաբական աշխարհի ազդեցության մեծացման մասին՝ փորձագետը եզրակացրեց, որ այդ աճն անմիջական կապ չունի Մերձավոր Արևելքի վերջին զարգացումների հետ: Սակայն արաբական աշխարհը՝ որպես քաղաքական և սոցիալ-մշակութային օրինակ, անուղղակիորեն է ազդում նման միտումների ծավալման վրա: Յ. Ամելինայի կարծիքով՝ ներկայումս իսլամականացումը լուրջ սպառնալիք է Ռուսաստանի անվտանգության համար:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնի գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու **Գ. Գևորգյանը** ««Արաբական գարունը» և քաղաքական փոփոխությունները արաբական աշխարհում (Եգիպտոսի օրինակի վրա)» զեկուցման մեջ անդրադարձավ արաբական աշխարհում տեղի ունեցած վերջին փոփոխություններին: Ըստ նրա՝ իսլամի դերի ուժեղացումը պայմանավորված է արտաքին ուժերի, մասնավորապես ԱՄՆ-ի աջակցությամբ: Չնայած այն հանգամանքին, որ Իրաքի բռնազավթումից հետո ԱՄՆ-ի 2000-ական թթ. առաջին կեսին վարած քաղաքականությունը հայտնվել է փակուղում, Միացյալ Նահանգները կարողացել են արագորեն կողմնորոշվել և փորձում են ուղղորդել տեղի ունեցող գործընթացները՝ օգտագործելով դեռևս 1970-ական թթ. մշակված «կառավարվող քառսի» տեսության դրույթները:

Իր «Սիրիական ձգնաժամը, Թուրքիան և հայկական համայնքը» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի ավագ գիտաշխատող **Ա. Հովհաննիսյանն** անդրադարձավ Սիրիայում հայկական համայնքի խնդիրներին: Նրա կարծիքով՝ Թուրքիան որդեգրել է Սիրիայում հայկական համայնքի թուլացմանը և անգամ ոչնչացմանը նպատակաուղղված քաղաքականություն: Ըստ փորձագետի՝ դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Սիրիայի համայնքը հայկական Սփյուռքի՝ Թուրքիայի դեմ տրամադրված առավել հզոր և կազմակերպված մասն է:

ՌՌՀԻ կովկասյան հետազոտությունների բաժնի ավագ գիտաշխատող **Կ. Տասիցը** «Կովկասյան սփյուռքը Սիրիայում և նրա հայրենադարձության խնդիրը երկրում ստեղծված ձգնաժամի համատեքստում» գեկուցման մեջ անդրադարձավ Սիրիայում գտնվող հյուսիսկովկասյան ժողովուրդների (չերքեզների, օսերի) խնդիրներին, նրանց Կովկաս հայրենադարձության հեռանկարներին, ինչպես նաև դրա հետ կապված ռիսկերին ու սպառնալիքներին:

Սեմինարի երկրորդ նիստը նվիրված էր տարածաշրջանի երկրների երկկողմ հարաբերություններին: ՌՌՀԻ Կենտրոնական Ասիայի և Մերձավոր Արևելքի բաժնի ավագ գիտաշխատող **Ի. Սվիստունովան** «Թուրքիան և Իրաքը Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական փոփոխությունների համատեքստում» գեկուցման մեջ խոսեց թուրք-իրաքյան հարաբերությունների մասին, հիմնականում անդրադառնալով Իրաքի թուրքմենների հիմնախնդրին:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Մերձավոր Արևելքի միջազգային հարաբերությունների ուսումնասիրության բաժնի գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու **Վ. Տեր-Մաթևոսյանը** («Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում. ադրբեջանական և վրացական ուղղություններ») անդրադարձավ Ադրբեջանում և Վրաստանում Թուրքիայի վարած քաղաքականությանը:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու **Գ. Իսկանդարյանի** («Հայ-իրանական հարաբերությունները արդի փուլում. հայացք Հայաստանից») և կրտսեր գիտաշխատող **Մ. Բաղդասարյանի** («Իրանի դիմակայությունն Արևմուտքին. հարավկովկասյան ուղղություն») գեկուցումներում քննության ենթարկվեցին Իրանի ներկա հարաբերությունները անդրկովկասյան հանրապետությունների հետ: ՌՌՀԻ Կենտրոնական Ասիայի և Մերձավոր Արևելքի բաժնի ավագ գիտաշխատող **Վ. Իվանենկոն** («Իրանը և Աֆղանստանը Միջին Արևելքի անվտանգության համակարգում») վերլուծեց Իրանի և Աֆղանստանի դերը Միջին Ասիայի անվտանգության ապահովման համատեքստում: Փորձագետի կարծիքով՝ ԱՄՆ-ի կողմից Իրանի հանդեպ իրականացվող հետևողական քաղաքականության հիմնական նպատակը իրավիճակի ապակայունացումն է երկրի ներսում՝ ներկայիս վարչակարգը փոխելու համար:

Սեմինարի վերջում ամփոփվեցին նիստերի արդյունքները: Երկու ինստիտուտների ղեկավարները հույս հայտնեցին, որ գիտական կենտրոնների միջև համագործակցությունը հետագայում ևս կշարունակվի ու կզարգանա:

Քրիստինե Ֆ. Մելքոնյան  
*Պատմ. գիտ. թեկնածու*

**AGHVERAN READINGS:  
“THE SITUATION AND PROGRESS TREND IN THE MIDDLE EAST”**

Christine F. Melkonyan